Հավելված N2
Շրջակա միջավայրի նախարարի 2021 թ.
հունիսի ___-ի N___-Լ հրամանի

«Հավելված N18
Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի
մարտի 24-ի N107-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կենսառեսուրսների կառավարման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

3. Վարչությունն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում իրականացնում է Նախարարության խնդիրներից, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչությունն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով, այլ

օրենքներով, Նախարարության կանոնադրությամբ Նախարարությանը վերապահված ոլորտում ապահովում է՝

1) շրջակա միջավայրի պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման ոլորտում լիցենզիաների, թույլտվությունների, պայմանագրերի, չափաքանակների (այդ թվում՝ անհատական), համաձայնեցումների, եզրակացությունների, հավաստագրերի տրամադրումը,

2) վայրի կենդանական և բուսական աշխարհի, որսորդական տնտեսությունների կադաստրի վարման գործընթացը:

III.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությունն իր խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու թույլտվությունների տրամադրման գործընթացի կազմակերպումը և ապահովումը,

2) Հայաստանի Հանրապետության տարածքից բուսաբանական հավաքածուներ և առանձին նմուշներ արտահանելու ու Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու թույլտվությունների տրամադրման գործընթացի կազմակերպումը և ապահովումը,

3) վայրի կենդանիներ և առանձին վայրի բույսեր և վայրի բույսերից դեղաբուսական հումք, որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով սահմանափակ է արտահանման դեպքում, մեկանգամյա լիցենզիաների տրամադրման գործընթացի կազմակերպումը և ապահովումը,

4) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կարմիր գրքերում ընդգրկված հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիների և բույսերի տեսակներ, որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության

մաքսային տարածքով սահմանափակ է արտահանման դեպքում արտահանման մեկանգամյա լիցենզիաների տրամադրման գործընթացի կազմակերպումը և ապահովումը,

5) «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով (ՍԻԹԵՍ) կարգավորման ենթակա վայրի կենդանիները և բույսերը, դրանց մասերն ու ածանցյալները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու, վերարտահանելու թույլտվությունների (հավաստագրերի) տրամադրման գործընթացի կազմակերպումը և ապահովումը,

6) կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման թույլտվությունների տրամադրման, պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպումը և ապահովումը,

7) Հայաստանի Հանրապետության տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակով օգտագործման (սիրողական որսի, որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի և ձկնորսության, ձկնորսության օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի) մասին պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպումը և ապահովումը,

8) Նախարարությանը վերապահված, Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում արգելված ապրանքների կանոնակարգման գործընթացի կազմակերպումը և ապահովումը,

9) իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրում և սահմանված կարգով կարծիքի տրամադրում, ինչպես նաև միջազգային հարաբերություններին իր իրավասության սահմաններում մասնակցությունը,

10) Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական և բուսական աշխարհի և դրանց պաշարների հաշվառման, մոնիթորինգի, գիտական ուսումնասիրությունների, պահպանության, վերարտադրության և կայուն օգտագործման ոլորտներում պետական քաղաքականության ձևավորմանն աջակցությունը,

11) որսորդական վկայականների տրամադրում և որսորդական տնտեսությունների ստեղծման աշխատանքների իրականացմանն աջակցությունը,

12) վայրի կենդանական և բուսական պաշարների կադաստրների ստեղծումը, վարումը և դրանց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը,

13) որսորդական տնտեսությունների (որսի կենդանիների) կադաստրի վարման իրականացումը, հաշվառման և մոնիթորինգի գործընթացի իրականացման ապահովումը,

14) Վարչության գործառույթների սահմաններում Նախարարությունում հարուցված վարչական վարույթների շրջանակներում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված գործողությունների իրականացման ապահովումը,

15) օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) օգտագործման ոլորտում համաձայնեցումների, եզրակացությունների, հավաստագրերի տրամադրման գործընթացում, անհրաժեշտության դեպքում, տեղանքի զննումը, տեղում ուսումնասիրությունների իրականացումը,

16) Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին մասնակցությունը,

17) Վարչության աշխատանքային ծրագրերի ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը,

18) նախարարի, իսկ օրենքով սահմանված դեպքերում և իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում՝ նաև նախարարի տեղակալների և Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարականների կատարումը,

19) իրավական այլ ակտերով բաժնին վերապահված գործառույթների իրականացումը:

V.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Նախարարության հաստիքացուցակով նախատեսված կազմով:

7. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

8. Վարչության պետն անմիջական հաշվետու է շրջակա միջավայրի նախարարին (այսուհետ՝ Նախարար):

9. Նախարարի հրամանով վարչության գործունեության համակարգումը կարող է վերապահվել Նախարարին կամ Նախարարի տեղակալներից մեկին:

10. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պաշտոնների դասակարգման համակարգում առավել բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնող վարչության այլ աշխատողը, ում պաշտոնի անձնագրով նախատեսված է վարչության պետին փոխարինելու իրավասություն, իսկ այս պայմանների հավասարության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող քաղաքացիական ծառայողը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչության պետին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի անհատական իրավական ակտով վարչության պետի փոխարինումը դրվել է Վարչության այլ աշխատողի վրա:

11. Վարչության պետի, Վարչության այլ աշխատողների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը, նրանց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերով:»: